ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 112905305 S4002

Պետության կարիքների համար ֆիքսված հեռախոսակապի ծառայությունների մատուցման

ք. Երևան "12" 08 2013 թ.

Հեռահաղորդակցության օպերատոր »Արմենիա Տելեֆոն Կոմպանի« փակ բաժնետիրական ընկերությունը, որը գործում է համաձայն իրեն տրամադրված թիվ 60 արտոնագրի (լիցենզիայի), այսուհետ՝ »Օպերատոր«

ք.Երևան, ՇԿԲ ԿՏ ԿՎԶԾ Խոշոր բիզնեսի զարգացման բաժին

(նշել մարզը, շրջանը ,քաղաքը)

ի դեմս լիազորված անձ Խոշոր բիզնեսի զարգացման բաժնի ղեկավար՝ Գոռ Զատիկյանի

մի կողմից, և մյուս կողմից »Բաժանորդ« Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարան, ի դեմս Աշխատակազմի ղեկավար՝ Հովհաննես Ստեփանյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա,

Կոտայքի մարզ, ք.Հրազդան, Միկրոշրջան 13 փող. 1/1

(իրավաբանական անձի հասցեն, քաղաքացու գրանցման վայրի հասցեն)

կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն Պայմանագրով »Օպերատորը« պարտավորվում է »Բաժանորդին« մատուցել սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող հավելված 1-ով սահմանված էլեկտրոնային հաղորդակցության ֆիքսված հեռախոսային կապի ծառայություններ, իսկ »Բաժանորդը« պարտավորվում է »Օպերատորին« վճարել մատուցված էլեկտրոնային հաղորդակցության ֆիքսված հեռախոսային կապի ծառայությունների համար սույն պայմանագրով սահմանված չափով, կարգով և ժամկետներում:

1.2.»Բաժանորդին« էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունները մատուցվում են կողմերի միջև երկկողմ համաձայնեցված և ստորագրված առանձին փաստաթղթերում (հավելված 4) ամրագրված »Բաժանորդին« հատկացված հեռախոսագծերով, հեռախոսի համարներով, կապուղիներով, միացնող գծերով, ուղիղ գծերով, ISDN ցանցային տերմինալով՝ NETMOD սարքավորում, CDMA համակարգով հեռախոսագծի բաժանորդային տերմինալով, անտենայի և այլ կապի միջոցներով:

2. Պայմանագրի գինը, վճարման կարգը և ժամկետները

2.1 Սույն պայմանագրի համաձայն »Բաժանորդի« կողմից »Օպերատորին« վճարման ենթակա գումարը /պայմանագրի գինը/ կազմված է.

- Բաժանորդային վճարից՝ 1 095 600 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ) տարեկան, որը հաշվարկվում և վճարվում է ամսական կտրվածքով՝ փաստացի մատուցված ծառայությունների վճարի հետ միաժամանակ,
- Ինչպես նաև փաստացի մատուցված էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների վճարից, որը հաշվարկվում ամսական կտրվածքով՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող Հավելված 1-ում ամրագրված գնացուցակի (նշված գները ներառում են ԱԱՀ):

2.2. »Օպերատորն« էլեկտրոնային փոստով »Բաժանորդին« է ներկայացնում սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող հավելված 2-ով և 3-ով ամրագրված օրինակելի ձևերի համապատասխան կազմված հանձնման-ընդունման արձանագրություն և հաշիվ՝ հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 10-րդ օրվանից սկսած, սակայն ոչ ուշ, քան 25-ը:

*Տվյալ տարվա դեկտեմբեր ամսվա գումարը »Բաժանորդը« տրամադրում է որպես կանխավճար: Կանխավճարի մարումն իրականացվում է արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:

Եթե »Օպերատորը« »Բաժանորդին« մատուցում է նաև այլ պայմանագրերով սահմանված էլեկտրոնային հաղորդակցության ծառայություններ, ապա »Օպերատորը« կարող է »Բաժանորդին« ներկայացնել բոլոր մատուցված ծառայությունների գծով մեկ միասնական հանձնման-ընդունման արձանագրություն, ինչպես նաև մեկ միասնական հաշիվ՝ կից ըստ պայմանագրերի առանձնացված հաշիվներով:

Վճարման ենթակա գումարի մասին տեղեկատվություն »Բաժանորդը« կարող է ստանալ այդ նպատակով առանձնացված հեռախոսահամարներով:

Հետագայում, տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում »Բաժանորդին« հաշիվները կարող են տրամադրվել նաև այլ եղանակներով:

2.3. »Բաժանորդը« բաժանորդային վճարն ու մատուցված ծառայության արժեքը վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները »Օպերատորի« հաշվարկային հաշիվ փոխանցելու միջոցով: Վճարումը համարվում է կատարված դրամական միջոցները »Օպերատորի« հաշվեհամարին մուտքագրվելու պահից:

2.4. »Օպերատորի« կողմից »Բաժանորդի« բաժանորդային վճարը և մատուցված հեռախոսակապի ծառայությունների դիմաց հաշվարկված գումարները »Բաժանորդը« պարտավոր է վճարել մինչև հաշվարկային ամսվան հաջորդող ամսվա